# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 10.03.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/30-7 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան «07» 06 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<Սերիշ>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ի. Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 10.03.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/30-7 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 10.03.2023թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

*2. Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

*3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ԳՆՈՐԴ
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն»
ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100
Մ. Ադամյան

---------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
<<Սերիշ>> ՍՊԸ
ք. Երևան, Դավթաշեն 4 թաղ., 46/7
ՀՎՀՀ 01244722
h/h 220573331893000
<<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ԲԲԸ, Շինարարներ մ/ճ
serishserish2021@gmail.com
091-40-58-69
Ի. Ավետիսյան

---------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.